

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի

28-ը նոյեմբերի 2014թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 9 անդամներ:

Նիստին հրավիրվել էին տնօրեն Ս. Ա. Առաքելյանը և ուսումնամեթոդական բաժնի պետ Ա. Յ. Դավթյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2014-15թթ. ուստարվա II ընթացիկ քննությունների և ստուգումների գրաֆիկների հաստատում:

/զեկ. Մ. Ա. Զաքարյան/

2. 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի քննաշրջանի գրաֆիկի հաստատում:

/զեկ. Մ. Ա. Զաքարյան/

3. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկաներին ներկայացրեց, որ ըստ ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի նախատեսված էր երկու հարց: Սակայն կապված ուսումնական պրոցեսի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունից օրակարգում դրվել է նաև ընթացիկ հարցեր:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի II ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը. ընդգծելով նաև քննությունները և ստուգումները անց են կացվելու դասախոսի ընտրությամբ քննական տետրերով և գնահատման կարգով /3+1/:

Անցկացվեց ընդանուր քննարկում և առաջարկվեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի II ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը:

2. Հանձնարարել ամբիոններին ընթացիկ քննությունները և ստուգումները անկացնել սահմանված կարգով:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ս. Ա. Զաքարյանը: Նա ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի սուգարքային շրջանի, քննաշրջանի ժամանակացույցը սկսած՝ կիսամյակի 17-րդ շաբաթից. 15.12.2014թ.-24.01.2015թ., որը կազմվել է համաձայն ուսումնական պլանի: Նա ընգծեց, որ բազմիցս քննարկվել է ամբիոններում և խմբերում:

Զեկուցողը հանձնարարեց ամբիոններին վերանայել հարցաշարերը, քննական տոմսերը կազմել անցած նյութի հիման վրա: Քննաշրջանը կազմակերպել ըստ հաստատված ժամանակացույցի, իսկ դեկանատին՝ սահմանել հսկողություն, քննաշրջանը անցկացնել ուսումնական պրոցեսին համապատասխան: Այս ուղղությամբ տնօրեն պր-ն Ս. Ա. Առաքելյանը հանձնարարեց ամբիոններին քննական տոմսի հարցերին ավելացնել մեկ տրամաբանական հարց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Յ. Դավթյանը, Ա. Վ. Յուզուլյանը, Մ. Ս. Աթոյանը, Գ. Վ. Գուլակյանը: Նրանք համակարծիք էին ներկայացված նյութին, ընդգծելով, որ գրաֆիկը կազմվել է հաստատված կարգին համապատասխան և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի քննաշրջանի գրաֆիկը:

2. Հանձնարարել ամբիոններին, որ քննական տոմսերը կազմվեն չորս հարցով:

Այնուհետև ֆակուլտետի խորհրդի նախագահը անդրադարձավ ներֆակուլտետային ուսումնական գործընթացի մասին: Նա մանրամասնեց, որ ֆակուլտետում իրականացվել և իրականացվում են ըստ ուսումնական գործընթացի ժամանակացույցի բոլոր պահանջները:

Զայնը տրվեց տնօրեն պր-ն Ս. Ա. Առաքելյանին: Նա պարտավորեցրեց նիստի մասնակիցներին, որ անհրաժեշտ է կիրառել առաջավոր փորձը, ավելացնել օժանդակ գրականությունը, լինել հետևողական ուսանողի ինքնուրույն աշխատանքի հանդեպ, որը կավելացնի ուսանողի զարգացվածությունը և հմտությունը: Յուրաքանչյուր

դասախոս պարտավոր է գտնել մեթոդ դասապրոցեսը կազմակերպել այնպես, որ առկա լինի ուսանողի հետաքրքրությունը, կիրառել տեսական և գործնական նյութի զուգակցումը, որի արդյունքում կբարձրանա տրամաբանությունը: Ըստ մասնագիտությունների, եթե ուսանողը ճիշտ է կազմում իր մասնագիտական քայլերի հաջորդականությունը և տրամաբանական շղթան, նա ժամանակին դառնում է կայացած մասնագետ, որը անհրաժեշտություն է աշխատաշուկայում:

Այնուհետև կապված ուսումնական պրոցեսի և կիսամյակի ավարտի հետ նիստի մասնակիցների կողմից անցկացվեց մտքերի փոխանակություն:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Հանձնարարել դեկանատին՝ սահմանել հսկողություն, օրակարգի հարցերի ընդունած որոշումների կատարման համար և արդյունքները ներկայացնել հաջորդ նիստի քննարկմանը:

**ՆԱԽԱԳԱՀ
ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ
Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**